

- 4 Ապայ ժողով անդ գումարի
 Յընտրութիւն նոր գահակալի,
 Յոր Սարգիս իսկ մըտեալ բազմի
 Որպէս գիտուն դէտ անուանի:
- 5 Նոյն ժողովոյ էր նա հոգի
 Ուր հանճարով քաջ բարբառի
 Եդեալ համայնց իսկ առաջի
 Զաբրահամ դէտ Հռեդեստոնի:
- 6 Որ ընդ աւուրս ընդ այնոսիկ
 Դեռ գտանիւր յաթոռն յայնմիկ,
 Ուր կատարեալ զուխտըն լռիկ
 Դառնալ խոկայր անդրէն յիւր բնիկ:
- 7 Սակայն ոմանք հարք հանգիսին
 Ընդդիմութեամբ ներհակէին
 Յընտրել ի գլուխ Հայոց Ազգին
 Զօնոյն Աբրահամն օտարոտին:
- 8 Առ այս բերեալ փաստ ասէին
 Թէ չէ նորա պաշտեալ գահին,
 Չէ ի դատուց հարց նոյն ուխտին,
 Եւ նըւիրակ չէ լեալ բնաւին:
- 9 Իսկ այլք ի հարց նոյն ատենին
 Թէպէտ ընտրել զնոյն հաճէին,
 Այլ նախ ազդեւ պարտ դատէին
 Զայն Բիւզանդիոյ Պատրիարդին:
- 10 Յայնժամ Սարգիս մեր բազմագէտ
 Զաբրահամըն քաջ վարդապետ
 Հռեդեստոնի խոհական դէտ
 Գովէր նախ սերտ բանիւ ճարտար: